ԱՐՄԻՆԵ ԱԼՈՅԱՆ
ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի ասպիրանտ

ՀՀ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Տնտեսության զարգացման և ազգային տնտեսությունների կատարողականների տարբերությունները պայմանավորող գործոնների ուսումնասիրություններն ի վերջո հանգում են երկրի ինստիտուցիոնալ միջավայրի իրավիճակին, որն այս համատեքստում որոշիչ ելակետային պայման է: Այդ մասին են վկայում նաև վերջին տասնամյակներին կատարված հետազոտությունները: Հետևաբար, տնտեսության զարգացման տեսլականն ուրվագծելու համար, նախևառաջ անհրաժեշտ է գնահատել երկրի ինստիտուցիոնալ միջավայրը, վեր հանել առկա հիմնախնդիրները և քայլեր ձեռնարկել դրանց լուծման ուղղությամբ: Հարկ է նշել, սակայն, որ երկրի ինստիտուցիոնալ միջավայրի գնահատման մոտեցումներն ու մեթոդները միանշանակ չեն, և հաճախ դրանցից յուրաքանչյուրն ընդգրկում է ինստիտուցիոնալ միջավայրի միայն մեկ կամ մի քանի տարր՝ այդպիսով հնարավորություն չտալով ստանալու համապարփակ և օբյեկտիվ գնահատական: Վերոնշյալից խուսափելու համար անհրաժեշտ է ինստիտուցիոնալ միջավայրը դիտարկել որպես դրա բաղկացուցիչ ինստիտուտների և այդ ինստիտուտների միջև առկա փոխազդեցությունների ամբողջություն, որի պարագայում, գնահատելով յուրաքանչյուր ինստիտուտի գործողության արդյունավետությունը, համակցելով ստացված ցուցանիշները և մատնանշելով համակարգի ներքին փոխազդեցությունները, կստանանք անհրաժեշտ արդյունքը: Սույն հոդվածում վերլուծել ենք ՀՀ ինստիտուցիոնալ միջավայրի վիճակը և շարժընթացը 2000-2020 թթ. կտրվածքով՝ համեմատություն կատարելով նաև ԵԱՏՄ երկրների հետ: Հոդվածում փորձ է արվել գնահատելու ՀՀ ինստիտուցիոնալ միջավայրը՝ օգտագործելով միջազգային պրակտիկայում լայնորեն օգտագործվող ցուցանիշների համախումբ:

Հիմնաբառեր. *ինստիտուտներ, ինստիտուցիոնալ միջավայր, տնտեսական ազատության ինդեքս, օրենքի գերակայության ինդեքս, սեփականության իրավունքի պաշտպանության ինդեքս*

JEL: B52, P48

Ներածություն: Տնտեսության զարգացման և գլոբալացման ներկա պայմաններում, երբ մրցակցությունը համաշխարհային բնույթ է կրում, իսկ տնտեսավարող սուբյեկտներն ազատ են՝ ընտրելու տնտեսական գործունեության իրականացման, ներդրումների կատարման և ֆինանսական միջոցների տեղաբաշխման վայրն ու ձևը, առավել քան երբևէ, կարևորվում է երկրների ինստիտուցիոնալ միջավայրի իրավիճակը՝ որպես կարևորագույն նախադրյալ այդ միջոցների ներգրավման, նորարարությունների խթանման և տնտեսության զարգացման համար: Այժմ պետությունները կարելի է դիտարկել որպես մրցակիցներ, որոնք մրցակցությանը դիմակայելու համար իրականացնում են ինստիտուցիոնալ միջավայրի, ենթակառուցվածքների, օրենսդրական, դատական համակարգի շարունակական բարելավումներ, իսկ համաշխարհային մի շարք հետազոտական կենտրոններ և գործակալություններ կատարում են երկրների վերոնշյալ համակարգերի գործունեության մշտադիտարկում և որոշակի պարբերականությամբ հրապարակում են դրանք գնահատող ցուցանիշներ՝ հաշվարկման տարբեր մեթոդաբանություններով: Այս ցուցանիշներն էլ հիմք են հանդիսանում ներդրողների և տնտեսավարող սուբյեկտների համար՝ համապատասխան որոշումներ ընդունելիս: Հետևաբար, երկրի ինստիտուցիոնալ միջավայրի իրավիճակը որոշիչ գործոն է երկրի տնտեսության զարգացման համատեքստում: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և գնահատել ՀՀ ինստիտուցիոնալ միջավայրը և վեր հանել առկա հիմնախնդիրները:

Գրականության ակնարկ: Ինստիտուտների՝ տնտեսության զարգացման վրա ունեցած ազդեցության հարցերի վերաբերյալ վերջին տասնամյակներին հետազոտություններ կատարած տեսաբանները և հետազոտողները[1] հիմնականում միակարծիք են: *Դ. Աճեմօղլուն, Ս. Ջոնսոնը և Ջ. Ռոբինսոնը* երկրների տնտեսական զարգացման տարբերությունները փորձում են բացատրել ինստիտուցիոնալ գործոնների տեսանկյունից՝ բերելով տեսական և էմպիրիկ հիմնավորումներ: Որպես ինստիտուցիոնալ միջավայրի որակի ցուցանիշ՝ հեղինակներն օգտագործել են բռնագանձման ռիսկից սեփականության իրավունքի պաշտպանության միջին մակարդակը[2]: *Թ. Բեքի, Ռ. Լևայնի և Գ. Սկալի*՝ սույն թեմայով հետազոտություններում հեղինակները, վիճակագրական տվյալների վերլուծության արդյունքում, նշում են, որ այն երկրները, որտեղ օրենքի գերակայություն է, զարգացած են մասնավոր սե-

---

[1] Տե՛ս **Hall R.E.. Jones C.,** Why do some countries produce so much more output per worker than others? Quarterly Journal of Economics, 114 (1), 1999, էջ 83–116, **Acemoglu D., Johnson S., Robinson J. A.,** Reversal of fortune: geography and institutions in the making of the modern world income distribution. Quarterly Journal of Economics, 117, 2002, էջ 1231–1294:

[2] Տե՛ս **Acemoglu D., Johnson S., Robinson J. A.,** Reversal of fortune: geography and institutions in the making of the modern world income distribution. Quarterly Journal of Economics, 117, 2002, էջ 1231–1294:

փականության պաշտպանության և ռեսուրսների տեղաբաշխման ազատության ինստիտուտները, գրանցում են տնտեսական աճի ավելի բարձր տեմպեր, քան այն երկրները, որտեղ ազատությունը սահմանափակված է, իսկ ինստիտուտները թույլ են զարգացած[3]:

Ինստիտուցիոնալ միջավայրի որակի չափումը և ինստիտուտների գործողության արդյունավետության գնահատումը լուրջ գիտական հետաքրքրություն են ներկայացնում հատկապես վերջին տասնամյակներին, այդ իսկ պատճառով այս թեմայով մի շարք հետազոտություններ են կատարվել և փորձեր արվել որոշակի ինդեքսների միջոցով ստանալու ինստիտուցիոնալ միջավայրի ամփոփ որակական գնահատականներ: Սակայն հարկ է նշել, որ առաջադրված խնդիրը բարդ է այնքանով, որքանով ինստիտուտների գործողությունը չի երաշխավորում անառարկելի վերջնարդյունք, և նույնիսկ դրանց գործողության արդյունքում գրանցված ցուցանիշները հնարավոր չէ վերագրել միայն գործողության արդյունավետությանը, քանի որ առկա է մի շարք այլ գործոնների միաժամանակյա ազդեցություն: Հետևաբար, ինստիտուտների և ինստիտուցիոնալ միջավայրի գնահատումը կատարվում է որոշակի վերապահումներով. հաշվարկվում են որոշակի ինդեքսներ, որոնք արտացոլում են ինստիտուցիոնալ միջավայրի առանձին բաղադրիչների, պարամետրերի որակական բնութագիրը՝ այդպիսով հնարավորություն տալով համեմատություն կատարելու տարբեր երկրների համադրելի ցուցանիշների միջև:

Կարելի է առանձնացնել վերոնշյալ բնութագրերը քանակապես չափելու չորս հիմնական տարբերակ.

1. վիճակագրական տվյալների վերլուծություն: Այս մեթոդը հնարավորություն է տալիս ինստիտուցիոնալ միջավայրը գնահատելու մակրոտնտեսական ցուցանիշների հիման վրա,
2. բնակչության և կազմակերպությունների շրջանում անցկացվող հարցումներ՝ որպես պետական ծառայությունների օգտատերերի անմիջական գնահատական,
3. փորձագետների հարցումներ,
4. ինստիտուցիոնալ միջավայրի որոշակի բնութագրիչների ուղղակի չափումներ:

Առաջին և չորրորդ մեթոդները հիմնված են օբյեկտիվ ցուցանիշների վրա, սակայն գործնականում ինստիտուցիոնալ միջավայրի որակի ինդեքսների հաշվարկման համար ավելի հաճախ կիրառվում են սուբյեկտիվ գնահատականները՝ հիմնված փորձագետների, գործարարության ներկայացուցիչների կամ բնակչության հարցումների արդյունքների վրա: Սուբյեկտիվ մեթոդների ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վիճակագրական տվյալների հիման վրա հնարավոր չէ հետազոտել ֆորմալ կամ ոչ ֆորմալ որևէ ինստիտուտի գործողության ազդեցությունը տնտեսավարող սուբյեկտների վարքագծի վրա: Այդ պատճառով *Դ. Վուդրոֆը* նշում է, որ չնայած այս հիմնախնդրի շուրջ կատարված հետազոտությունների մեծ քանակին, դեռևս չկա ինստիտուցիոնալ միջավայրի կամ ինստիտուտների գնա-

---

[3] Տե՛ս **Beck T., Levine R.,** Legal Institutions and Financial Development. Handbook of New Institutional Economics, 2005, էջ 251–278, **Scully G.W.** The institutional Framework and Economic Development. Journal of Political Economy, 1998, N3, էջ 652–662:

հատման[4] միասնական մոտեցում: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ «ինստիտուտներ» և «ինստիտուցիոնալ միջավայր» հասկացությունները բարդ են ու բազմաբնույթ, և տեսաբաններից/հետազոտողներից յուրաքանչյուրը տարբեր կերպ է ընկալում և մեկնաբանում, հետևաբար նաև գնահատման տարբեր մոտեցումներ առաջարկում:

Ինստիտուտների չափման/գնահատման փորձերն ի վերջո հանգում են հետևյալ տարբերակներից որևէ մեկին՝

- ֆորմալ ինստիտուտների գնահատում,
- ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների համակցության գնահատում,
- սեփականության իրավունքների ընդլայնված գնահատում,
- առանձին, յուրահատուկ ինստիտուտների նեղ գնահատում:

Վերոնշյալ տարբերակներից յուրաքանչյուրը թե՛ տեսական, թե՛ էմպիրիկ հիմնավորումներ ունի: Տեսաբանների շրջանում ընդունված մոտեցում է, որ ֆորմալ ինստիտուտներից տնտեսական աճի վրա ամենամեծ ազդեցությունն ունի սեփականության իրավունքի ինստիտուտը[5]: Իսկ սեփականության իրավունքի արդյունավետությունը գնահատող ցուցանիշներից ամենահաճախն օգտագործվում է տնտեսական ազատության ինդեքսը (ՏԱԻ, ներկայումս հաշվարկվում և հրապարակվում է Fraser institute-ի կողմից), որի հիմնական գաղափարը հեղինակները վերցրել են Ադամ Սմիթի[6] տեսությունից:

Սույն հոդվածում կդիտարկենք հատկապես ինստիտուտների որակի գնահատման Dietsche-ի[7] առաջարկած ցուցանիշները, քանի որ հենց դրանց մեծամասնությունն է ներկայումս լայն տարածում գտել հետազոտական կազմակերպությունների շրջանում: Դիտարկելով ինստիտուտների գնահատման ինդեքսների թերությունները՝ *Ս. Վոյգթը*[8] եզրակացնում է, որ ինստիտուտների չափման/գնահատման ինդեքսը պետք է լինի ճշգրիտ, օբյեկտիվ և անպայմանորեն պետք է հաշվի առնվեն ինստիտուտների դե յուրե և դե ֆակտո տարրերը:

Հետազոտության մեթոդաբանություն: Հոդվածի հիմնական վերլուծություններն իրականացվել են Համաշխարհային բանկի, Freedom house, Heritage foundation, Fraser institute, Prs Group, Transparency International կազմակերպությունների, Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հրապարակվող վիճակագրական տվյալների հիման վրա: Հետազոտությանն անհրաժեշտ տեղեկատվական հիմքերն են նաև ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական տվյալներն ու հրապարակումները, ՀԲ-ի տարեկան զեկույցները, ԵԱՏՄ երկրների տարեկան հաշվետվությունները, Doing Business տարեկան զեկույցները, ՏՀԶԿ-ի կողմից հրա-

---

[4] Տե՛ս **Woodruff D. M.,** Understanding Rules and Institutions: Possibilities and Limits of Game Theory. Qualitative Methods Newsletter, 4 (1), 2006, էջ 13–17:

[5] Տե՛ս North, 1990, 1991 and North & Thomas, 1973.

[6] Տե՛ս **Smith A.,** An Inquiry into the Nature and Causes of the Wealth of Nations, University Of Chicago Press, 1977 [1776], ISBN 0-226-76374-9:

[7] Տե՛ս **Dietsche E.,** Why the Quality of Institutions Is Not a Cure for the "Resource Curse." The Journal of Energy and Development, 32 (2), 2007, էջ 262–282:

[8] Տե՛ս **Voigt S.,** How (Not) to Measure Institutions. Journal of Institutional Economics, 9(1), 2013, էջ 1-26:

պարակված զեկույցներն ու պաշտոնական վիճակագրությունը: Հետազոտության ընթացքում կիրառվել են գործոնային, համեմատական, վիճակագրական, մաթեմատիկական, ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդներն ու գործիքները:

Այժմ անդրադառնանք ենթագործոնների հաշվարկման մեթոդաբանությանը: Սեփականության իրավունքի պաշտպանության ինդեքսը հաշվարկվում է որպես հետևյալ 5 ենթագործոնների միջին կշռված արժեք՝ գույքային սեփականության իրավունք, մտավոր սեփականության իրավունք, ներդրողների շահերի պաշտպանություն, բռնագանձման ռիսկ, անշարժ գույքի կառավարման որակ, ընդ որում՝ ենթագործոններից յուրաքանչյուրի կշիռն ինդեքսում հավասար է[9]:

Դատական համակարգի արդյունավետության ինդեքսի հաշվարկում ներառվում են դատական անկախությունը, դատական գործընթացի որակը, դատական որոշումներ ընդունելու ֆավորիտիզմը:

Պետության ներառականության ինդեքսը հաշվարկվում է որպես հետևյալ 5 ենթագործոնների միջին կշռված արժեք՝ անօրինական վճարումներ և կաշառքներ, կառավարության քաղաքականության մշակման թափանցիկություն, կոռուպցիայի բացակայություն, կոռուպցիայի ընկալումներ և կառավարության ու քաղաքացիական ծառայության թափանցիկություն:

Հարկային բեռի հաշվարկման համար հիմք են ընդունվում անհատական եկամտային հարկի ամենաբարձր սահմանային դրույքաչափը, կորպորատիվ եկամտային հարկի առավելագույն սահմանային դրույքաչափը և ընդհանուր հարկային բեռը՝ որպես ՀՆԱ-ի տոկոս:

Պետական ծախսերն ընդգրկում են պետական հատվածի կողմից սպառմանն ուղղված ծախսերը, ինչպես նաև տարբեր ծրագրերի իրականացման համար ուղղված տրանսֆերտները: Հավելենք նաև, որ այս ենթագործոնի օպտիմալ մակարդակ սահմանված չէ, քանի որ յուրաքանչյուր երկրի պարագայում արդյունավետ կարող են համարվել այս ցուցանիշի տարբեր մակարդակներ՝ պայմանավորված երկրի տնտեսության առանձնահատկություններով:

Հարկաբյուջետային կարգավորման արդյունավետության (Fiscal health) ենթագործոնի հաշվարկում ընդգրկվում են վերջին երեք տարվա ընթացքում ՀՆԱ-ի նկատմամբ հաշվարկված պետբյուջեի միջին պակասուրդը՝ տոկոսով (գնահատման 80%-ը) և պետական պարտքը՝ որպես ՀՆԱ-ի տոկոս (գնահատման 20%):

Գործարարության ազատության գործոնը հաշվարկվում է որպես հետևյալ 13 ենթագործոնների միջին կշռված արժեք՝ բիզնես սկսելու գործընթացներ (քանակ), բիզնես սկսելու համար պահանջվող ժամանակահատված (օրեր), բիզնես սկսելու համար պահանջվող ծախսեր (1 շնչին ընկնող եկամտի նկատմամբ տոկոս), բիզնես սկսելու համար պահանջվող նվազագույն կապիտալ (1 շնչին ընկնող եկամտի նկատմամբ տոկոս), գործունեության արտոնագիր ստանալու համար պահանջվող գործընթացներ (քանակ), ժամանակահատված (օրեր), պահանջվող ծախսեր (1 շնչին ընկնող եկամտի նկատմամբ տոկոս), գործունեությունը դադարեցնելու/ բիզնեսը փակելու հա-

[9] https://www.heritage.org/index/pdf/2020/book/methodology.pdf

մար պահանջվող ժամանակ (տարի), ծախսեր (գույքի արժեքի նկատմամբ տոկոս), վերականգնման մակարդակ, էլեկտրականություն ստանալու համար պահանջվող գործընթացներ (քանակ), ժամանակահատված (օրեր), պահանջվող ծախսեր (1 շնչին ընկնող եկամտի նկատմամբ տոկոս):

Աշխատուժի ազատության ինդեքսի հաշվարկման համար որպես ենթագործոններ են դիտարկվում՝

- նվազագույն աշխատավարձի հարաբերակցությունը յուրաքանչյուր աշխատողի համար ավելացված միջին արժեքին,
- լրացուցիչ աշխատողներ վարձելու խոչընդոտները,
- աշխատաժամերի կոշտությունը,
- ավելորդ աշխատողներին աշխատանքից հեռացնելու դժվարությունը,
- իրավական կարգով ծանուցման ժամկետը,
- պարտադիր վճարումները,
- աշխատուժի մասնակցության մակարդակը:

Դրամավարկային ազատության ինդեքսի հաշվարկման համար հիմք են հանդիսանում վերջին 3 տարիների գնաճի միջին կշռված արժեքը և կառավության՝ գների վրա ազդեցության (ուղղակի վերահսկողության կամ սուբսիդիաների միջոցով) որակական գնահատականը:

Առևտրի ազատության ինդեքսի ենթագործոններն են՝

- ներմուծման և արտահանման մաքսատուրքերի միջին կշռված արժեքը՝ ըստ արտահանման և ներմուծման ծավալների մեջ յուրաքանչյուր ապրանքատեսակի ունեցած կշռի,
- ազատ առևտրի ոչ սակագնային խոչընդոտների (Nontariff Barriers-NTBs10) որակական գնահատականը:

Ներդրումային ազատության ինդեքսի առավելագույն մակարդակը (100) հնարավոր է գրանցել, եթե տվյալ երկրում ներդրումների կատարման որևէ սահմանափակում առկա չէ: Հետևաբար, ներդրումային ազատության ինդեքսի հաշվարկման համար առավելագույն 100 միավորից հանվում են յուրաքանչյուր տեսակի ներդրումային սահմանափակումների միավորները՝ համապատասխան կշիռներով:

Ֆինանսական ազատության ինդեքսն արտացոլում է բանկային համակարգի արդյունավետության մակարդակը, ինչպես նաև գնահատում է ֆինանսական համակարգի՝ պետական կառավարման համակարգից անկախության մակարդակը:

Այդ նպատակով դիտարկվում են 5 ենթագործոններ.

- պետության՝ ֆինանսական ծառայությունների կարգավորման մակարդակը,
- պետական միջամտության աստիճանը բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում՝ ուղղակի կամ անուղղակի սեփականության ձևով,
- վարկերի տեղաբաշխման վրա կառավարության ազդեցության մակարդակը,
- ֆինանսական և կապիտալի շուկաների զարգացածության մակարդակը,

[10] https://www.heritage.org/index/pdf/2020/book/methodology.pdf էջ 496

– արտաքին մրցակցության համար բացության աստիճանը:

Վերլուծություն: Ինստիտուցիոնալ միջավայրի հնարավորինս բազմակողմանի գնահատման նպատակով սույն հոդվածում, համեմատական և օբյեկտիվ պատկեր ստանալու համար[11], կներկայացնենք տնտեսագիտական հետազոտություններում լայնորեն կիրառվող ինդեքսները, դրանց մակարդակի փոփոխությունը 2000-2020 թթ. ժամանակահատվածում, ՀՀ և ԵԱՏՄ երկրների դեպքում: Մասնավորապես կդիտարկենք հետևյալ ինդեքսները՝

– տնտեսական ազատության ինդեքսը (ՏԱԻ) (Heritage Foundation),
– պետական համակարգի արդյունավետության գնահատման ինդեքսները (Worldwide Governance Indicators, World Bank),
– բիզնես-միջավայրը գնահատող ինդեքսները (Doing Business Indicator, World Bank),

Տնտեսական ազատության ինդեքսը հիմնվում է տնտեսական և ձեռնարկատիրական գործունեության միջավայրի 4 կարևորագույն ինստիտուտների-ոլորտների վրա, որոնց նկատմամբ իրականացվում է պետական վերահսկողություն, այսինքն, կարելի է նշել, որ ՏԱԻ-ն արտացոլում է պետության ինստիտուցիոնալ միջավայրը՝ օգտագործելով քանակական և որակական 12 ցուցանիշներ, որոնք էլ խմբավորված են տնտեսական ազատականության 4 հենասյուներում[12]:

Դիտարկենք ՀՀ և ԵԱՏՄ երկրների տնտեսության ազատության ինդեքսի շարժընթացը 2000-2020 թթ.[13]:

Գծապատկեր 1-ից ակնհայտ է, որ ՏԱԻ ցուցանիշով, դիտարկվող երկրներից դիտարկվող ժամանակահատվածի սկզբում և ամբողջ ընթացքում, ՀՀ-ն առաջատարի դիրքում է եղել, բացառությամբ 2018 թվականի, երբ ՏԱԻ ամենաբարձր ցուցանիշը գրանցել է Ղազախստանը՝ 69,10՝ գերազանցելով ՀՀ ցուցանիշը՝ 68,70: Դիտարկվող ժամանակահատվածի սկզբում ՏԱԻ ցուցանիշի ամենացածր մակարդակը գրանցել է Բելառուսը: Սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ շուկայական տնտեսության անցման ժամանակահատվածում Բելառուսն ընտրեց սահմանափակ բարեփոխումների տարբերակը, իսկ, օրինակ, Հայաստանը և Ղրղզստանն ի սկզբանե աստիճանական (գրադուալիստական) տարբերակով իրականացրեցին անցումը շուկայական տնտեսության: Ինչ վերաբերում է Ռուսաստանին և Ղազախստանին, ապա անցումն այս դեպքում իրականացվեց «արագությունն ընդհատված բարեփոխումների տարբերակով»[14]: Այստեղից կարելի է եզրակացնել, որ նշված երկրների պարագայում անցումային տնտեսության ինստիտուցիոնալ համակարգի կայացման ամենաարդյունավետ տարբերակն աս-

---

[11] Հարկ է նշել, որ ցուցանիշների մի մասի գծով ժամանակագրական շարքն ընդգրկում է մինչ 2020 թ. տվյալները (ՏԱԻ, սեփականության իրավունքի պաշտպանության ինդեքս, դատական համակարգի արդյունավետության ինդեքս, գործարարության ազատության ինդեքս), իսկ մյուսների գծով հրապարակված վերջին տվյալները 2018 թ. ամփոփ ցուցանիշներով են:

[12] https://www.heritage.org/index/pdf/2020/book/methodology.pdf

[13] 2020 թ. ինդեքսի ցուցանիշների մեծամասնությունը հաշվարկվել է 2018 թ. 2-րդ կեսից 2019 թ. 1-ին կեսի տվյալների հիման վրա, հավելենք նաև, որ որոշ ցուցանիշների համար հիմք են հանդիսացել պատմական միջինի տվյալները, մասնավորապես՝ դրամավարկային քաղաքականության ինդեքսը գնաճի 3 տարվա կշռված միջինն է:

[14] Տե՛ս **Oleh H., Meng X., Tupy M. L.,** Led to Higher Growth and More Political Freedom, Policy Analysis N 795, July 12, 2016, CATO Institute, էջ 7:

տիճանական բարեփոխումների տարբերակն է եղել: Հարկ է նշել սակայն, որ դիտարկվող բոլոր երկրների դեպքում նկատում ենք ՏԱԻ ցուցանիշի բարելավում միևնույն ժամանակահատվածի կտրվածքով, սակայն ՀՀ-ի դեպքում, բացառությամբ 2000-2004 թթ. բարելավման, նկատելի այլ առաջընթաց, թրենդի փոփոխություն դեպի վեր տեղի չի ունեցել: ՀՀ-ն 2020 թ. ՏԱԻ 70,6 ցուցանիշով աշխարհի երկրների ընդհանուր շարքում 34-րդն է: Ցուցանիշի կայուն բարելավում ապահովելու համար ՀՀ-ն պետք է բարելավի դատական համակարգի արդյունավետությունը և պետության ներառականությունը[15]:



Գծապատկեր 1. ***Տնտեսական ազատության ինդեքսի շարժընթացը ԵԱՏՄ երկրներում, 2000-2020 թթ[16].***

Այժմ դիտարկենք տնտեսության նորարարական զարգացման համատեքստում հիմնարար նշանակություն ունեցող ինստիտուտի՝ սեփականության իրավունքի պաշտպանության ինդեքսի շարժընթացը 2000-2020 թթ.:

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 2-ից, սեփականության իրավունքի պաշտպանության ինդեքսի ժամանակագրական թրենդը, դիտարկվող երկրների պարագայում, համընկնում է՝ նվազելով 2006-2016 թթ. ընթացքում: Բացառություն է Ղազախստանը, որի պարագայում նկատում ենք ցուցանիշի բարելավում 2009-2012 թթ.: Փաստենք, որ ՀՀ ՏԱԻ ցուցանիշի ձևավորման վրա ամենամեծ բացասական ազդեցությունը 2006-2016 թթ. (պետության ներառականության ցուցանիշից հետո) ունեցել է սեփականության իրավունքի պաշտպանության ցածր մակարդակը: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Հայաստանը միջազգային սեփականության իրավունքի ինդեքսի (International Property Rights Index (IPRI)[17]) 2009 թ. զեկույցում մտավոր սեփականության պաշտպանության ամենացածր ցուցանիշն է գրանցել աշխարհում[18]:

---

[15] https://www.heritage.org/index/country/armenia

[16] Տվյալների աղբյուրը՝ https://www.heritage.org/index/explore?view=by-region-country-year&u=637424280360921616

[17] https://s3.amazonaws.com/ipri2018/2009_full.pdf

[18] http://thf_media.s3.amazonaws.com/index/pdf/2010/Index2010_Chapter7.pdf



Գծապատկեր 2. ***Սեփականության իրավունքի պաշտպանության ինդեքսի շարժընթացը ԵԱՏՄ երկրներում, 2000-2020 թթ[19].***

Անհրաժեշտ է նշել նաև, որ սեփականության իրավունքի պաշտպանության ինդեքսի ցածր մակարդակը պայմանավորված է եղել դատական համակարգի անարդյունավետությամբ, կոռուպցիայի առկայությամբ, ինչպես նաև պայմանագրային պարտավորությունների կատարման ցածր մակարդակով:

Դիտարկվող ժամանակահատվածում նկատում ենք Հայաստանի դատական համակարգի արդյունավետության աստիճանական բարելավում[20], որը 2020 թ. դրությամբ, 2017 թ. համեմատությամբ, հանգեցրել է ցուցանիշի 27,3 տոկոսային կետով աճի՝ ՀՀ դիրքը բարձրացնելով դիտարկվող երկրների նկատմամբ: Արդյունքում, 2020 թ. տվյալներով, դիտարկվող երկրների շարքում Հայաստանը զիջում է միայն Ղազախստանին: Պատահական չէ նշված ժամանակահատվածում ՀՀ դատական համակարգի արդյունավետության բարձրացումը. մասնավորապես՝ 2018 թ. թավշյա հեղափոխությունից հետո կառավարության ձեռնարկած միջոցառումներն իրենց ազդեցությունն են ունեցել, սակայն հիմնարար բարեփոխումների անհրաժեշտությունը դեռևս պահպանվում է, քանի որ առկա է բյուրոկրատիայի բարձր մակարդակ և կոռուպցիա, որը ոչ միշտ է բացահայտվում և հետապնդվում (գծապատկեր 3):

[19] Տվյալների աղբյուրը՝ https://www.heritage.org/index/explore?view=by-region-country-year&u=637424280360921616

[20] Դատական համակարգի արդյունավետության ինդեքսի դիտարկումը կատարվել է 2017-2020 թթ. տվյալների հիման վրա, քանի որ դիտարկվող երկրներից մի մասի համադրելի տվյալները մինչ 2017 թ. բացակայում են:



Գծապատկեր 3. ***Դատական համակարգի արդյունավետության ինդեքսի շարժընթացը ԵԱՏՄ երկրներում, 2017-2020 թթ[21].***



Գծապատկեր 4. ***Օրենքի գերակայության ինդեքսի- Rule Of Law (World Bank) շարժընթացը ԵԱՏՄ երկրներում, 2001-2018 թթ[22].***

Օրենքի գերակայության ինդեքսի արժեքը տատանվում է -2.5-ից 2.5-ի սահմաններում: Որքան բարձր է ինդեքսի արժեքը, այնքան ավելի բարձր է երկրում օրենքի գերակայությունը: Գծապատկեր 4-ից կարող ենք նկատել, որ, դիտարկվող երկրների համեմատությամբ, ՀՀ-ն կրկին ամբողջ ժամա-

[21] Տվյալների աղբյուրը՝ https://www.heritage.org/index/explore?view=by-region-country-year&u=637424280360921616

[22] Տվյալների աղբյուրը՝ https://databank.worldbank.org/source/worldwide-governance-indicators

նակահատվածում առաջատարի դիրքում է: Ցուցանիշի նկատելի բարելավումներ արձանագրվել են 2001-2003, 2006-2008 և 2015-2016 թթ. կտրվածքով, սակայն ցուցանիշը դեռևս գտնվում է բացասական տիրույթում, ինչն էլ վկայում է այս ոլորտում ֆորմալ նորմերի կիրառման և վերահսկողության ցածր մակարդակի, օրենքի նկատմամբ այլ մեխանիզմների, քաղաքական և անձնային շահերի վերադասման ու ինստիտուցիոնալ բացերի առկայության մասին: Եթե նույն ինդեքսի պատմական հետագիծը դիտարկենք Ղազախստանի օրինակով, ապա կնկատենք թրենդի կայուն աճի միտում, որը պայմանավորված է երկրում իրականացվող պարբերական բնույթ կրող դատաիրավական համակարգի բարեփոխումներով: Նշենք նաև, որ 2018 թ. տվյալներով՝ օրենքի գերակայության ամենաբարձր ինդեքսը գրանցել է Նորվեգիան:



Գծապատկեր 5. ***Գործարարության ազատության ինդեքսի շարժընթացը ԵԱՏՄ երկրներում, 2000-2020 թթ***[23].

Գործարարության ազատության ինդեքսի[24] ցուցանիշով, դիտարկվող ամբողջ ժամանակահատվածի կտրվածքով, ՀՀ-ն առաջատարի դիրքում է: 2019 թ. ՀՀ-ն դյուրացրել է ձեռնարկությունների գրանցման գործընթացը՝ իրավաբանական անձանց հնարավորություն ընձեռելով կամավոր գրանցվել որպես ԱԱՀ վճարող, որի արդյունքում Doing Business ինդեքսով ՀՀ-ն, նախորդ տարվա համեմատությամբ, 6 կետով բարելավել է իր դիրքերը՝ 190 երկրների շարքում զբաղեցնելով 41-րդ հորիզոնականը[25]: 2015 թ. զեկույցի համաձայն՝ բարելավվել, կանոնակարգվել են գրանցմանը հաջորդող ընթա-

[23] Ինդեքսի հաշվարկման համար օգտագործված բոլոր տվյալները վերցված են World Bank's Doing Business հաշվետվությունից, հղումը՝ https://www.doingbusiness.org/en/data/exploretopics/starting-a-business:

[24] Տե՛ս World Bank's Doing Business հաշվետվությունը, https://www.doingbusiness.org/en/data/exploretopics/starting-a-business:

[25] https://www.doingbusiness.org/en/reforms/overview/topic/starting-a-business

ցակարգերն ու գործընթացները: 2014 թ. վերացվել են ձեռնարկությունների պետական գրանցման միջնորդավճարները՝ այդպիսով դյուրացնելով ձեռնարկատիրական գործունեություն սկսելու փուլը: 2012 թ. հիմնական բարելավումը եղել է ձեռնարկությունների գրանցման, ՀՎՀՀ-ի և անվանման գրանցման «մեկ պատուհանի» սկզբունքի, ինչպես նաև ձեռնարկության առցանց գրանցման հնարավորության ներդրումը: 2010 թ. հիմնական բարեփոխումը կազմակերպության նվազագույն կապիտալի պահանջի և կազմակերպության կնիքի պատրաստման համար ոստիկանությունից թույլատրության պահանջի վերացումն է եղել (գծապատկեր 5):



Գծապատկեր 6. ***Ձայնի լսելիության և հաշվետվողականության ինդեքսի շարժընթացը ԵԱՏՄ երկրներում, 2001-2018 թթ[26].***

Ձայնի լսելիության և հաշվետվողականության ինդեքսը ցույց է տալիս երկրի քաղաքացիների՝ կառավարությանը ընտրությանը մասնակցության, կառավարության հաշվետվողականության և գործունեության թափանցիկության, ինչպես նաև ազատ արտահայտվելու, գործելու և լրատվամիջոցների ազատության մակարդակը[27]: Ինդեքսի արժեքը տատանվում է -2.5-ից 2.5 սահմաններում: Որքան բարձր է ինդեքսի արժեքը, այնքան ավելի բարձր է երկրում ձայնի լսելիության/ժողովրդավարության և հաշվետվողականության մակարդակը:

Գծապատկեր 6-ից պարզ է դառնում, որ դիտարկվող ժամանակահատվածի սկզբում ՀՀ և ՌԴ ցուցանիշները համընկնում են և դիտարկվող երկրների շարքում ամենաբարձրն են, այնուհետև ինդեքսի համընթաց նվազում ենք նկատում, որը շարունակվում է մինչ 2010 թվականը, որից հետո ՀՀ-ի դեպքում տեսնում ենք ինդեքսի աստիճանական բարելավում, ի տարբերություն ՌԴ-ի, որն այս ինդեքսի գծով 2010-2018 թթ. ժամանակահատվածում իր դիրքերը զիջել է Ղրղզստանին: Ինչ վերաբերում է դիտարկվող

[26] Տվյալների աղբյուրը՝ https://databank.worldbank.org/source/worldwide-governance-indicators
[27] https://info.worldbank.org/governance/wgi/pdf/va.pdf

մյուս երկրներին, ապա թրենդի զգալի փոփոխություն չի արձանագրվել դիտարկվող ժամանակահատվածում:



Գծապատկեր 7. ***Կարգավորող ինստիտուտների որակի ինդեքսը ԵԱՏՄ երկրներում, 2000-2018 թթ[28].***

Կարգավորող ինստիտուտների որակի ինդեքսն արտացոլում է կառավարության՝ մասնավոր հատվածի զարգացման համար անհրաժեշտ քաղաքականության և նորմատիվ իրավական ակտերի մշակման և իրագործման ունակությունն ու կարողությունը: Այս ինդեքսի հաշվարկման համար դիտարկվում են երկրի մրցակցային միջավայրը, խտրական մաքսատուրքերի կիրառումը, պետական վերահսկողության մակարդակը, ներդրումային և ֆինանսական ազատությունը, հարկային համակարգի ազդեցությունը աշխատելու կամ ներդրումներ կատարելու խթանների վրա և շատ այլ հանգամանքներ[29]: Գծապատկեր 7-ից ակնհայտ է, որ ՀՀ-ն, ԵԱՏՄ երկրների համեմատությամբ, առաջատարի դիրքում է դիտարկվող ամբողջ ժամանակահատվածի կտրվածքով, սակայն սա չի նշանակում, որ ՀՀ կարգավորող ինստիտուտների որակն իրավամբ բարվոք է: Անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ՀՀ կարգավորող ինստիտուտների որակի ինդեքսի թրենդը գրեթե առաջընթաց չի գրանցել 2007-2018 թթ. ժամանակահատվածի կտրվածքով: Եթե համեմատենք ՀՀ վերոնշյալ ցուցանիշը հարևան և զարգացած երկրների 2018 թ. համապատասխան ցուցանիշների հետ (գծապատկեր 8), ապա կնկատենք, որ ՀՀ-ն զիջում է համեմատվող բոլոր երկրներին՝ բացառությամբ Ադրբեջանի՝ -0,3807242 և Թուրքիայի՝ -0,0474772 ցուցանիշների:

[28] Տվյալների աղբյուրը՝ https://databank.worldbank.org/source/worldwide-governance-indicators
[29] https://info.worldbank.org/governance/wgi/Home/Documents



Գծապատկեր 8. ***Կարգավորող ինստիտուտների որակի ինդեքս, 2018 թ.***[30]

Հաշվի առնելով վերոբերյալը՝ անհրաժեշտ է նշել, որ ինդեքսի պատմական միջին մակարդակից դրականորեն շեղվելու համար ՀՀ-ն պետք է համապատասխան քայլեր ձեռնարկի: Օրինակ կարող է ծառայել Սինգապուրի, Նոր Զելանդիայի, Շվեդիայի, Գերմանիայի և Միացյալ Թագավորության փորձը:



Գծապատկեր 9. ***ԵԱՏՄ երկրների կոռուպցիայի վերահսկողության ինդեքսի շարժընթացը 2000-2018 թթ.***[31]

[30] Տվյալների աղբյուրը՝ https://databank.worldbank.org/source/worldwide-governance-indicators
[31] Տվյալների աղբյուրը՝ https://databank.worldbank.org/source/worldwide-governance-indicators



Գծապատկեր 10. ***Կոռուպցիայի վերահսկողության ինդեքս, 2018 թ.***[32]

Գծապատկեր 9-ից պարզ է դառնում, որ ԵԱՏՄ երկրների շարքում կոռուպցիայի վերահսկողության ինդեքսով, 2000-2018 թթ. կտրվածքով, կարճ ընդհատումով, առաջատարի դիրքը պահպանել է Բելառուսը, իսկ Հայաստանը դիտարկվող ժամանակահատվածում զիջել է միայն Բելառուսին: Հարկ է նշել նաև, որ դիտարկվող ամբողջ ժամանակահատվածում ԵԱՏՄ բոլոր երկրներում կոռուպցիայի վերահսկողության մակարդակն ինդեքսի բացասական տիրույթում է գտնվել: Այս համատեքստում, օրինակելի են Վրաստանի կողմից ձեռնարկված քայլերը, որոնց արդյունքում, 2000-2018 թթ. ժամանակահատվածում, համապատասխան ցուցանիշի՝ -1,52726 մակարդակից աստիճանական բարելավումների արդյունքում 2018 թ. արդեն գրանցվել է 0,707991 դրական ցուցանիշը: Հայաստանի դեպքում ևս նկատում ենք աստիճանական բարելավում, հետևաբար անհրաժեշտ է շարունակել բարեփոխումները, քանի որ ցուցանիշի մակարդակը վկայում է բարելավման ներուժի մասին: Ինչ վերաբերում է համաշխարհային տվյալներին, ապա, համաձայն գծապատկեր 10-ի, կոռուպցիայի վերահսկողության ինդեքսի ամենաբարձր մակարդակը 2018 թ. գրանցել է Նոր Զելանդիան՝ 2,174696, որին հաջորդում է Սինգապուրը՝ 2,174524: Պատահական չէ նաև այն հանգամանքը, որ կոռուպցիայի վերահսկողության ինդեքսի ամենաբարձր մակարդակն ապահովել են տնտեսապես զարգացած երկրները:

Եզրակացություններ: Երկրի ինստիտուցիոնալ միջավայրը գնահատելու փորձերն ի վերջո հանգում են դրա բաղկացուցիչ ինստիտուտների գործունեության արդյունավետության գնահատման արդյունքների և փոխազդեցությունների համադրությանը: Դիտարկելով ՀՀ ինստիտուցիոնալ միջավայրը բնութագրող հիմնական ինդեքսների շարժընթացը 2000-2020 թթ. ընթացքում՝ ցուցանիշների մեծամասնության գծով նկատում ենք բարելավում

[32] Տվյալների աղբյուրը՝ https://databank.worldbank.org/source/worldwide-governance-indicators

թե՛ պատմական միջինի, թե՛ տարածաշրջանային միջինի նկատմամբ: Բացառություն են կազմում գործարարության ազատության ինդեքսը և կարգավորող ինստիտուտների որակի ինդեքսը, ընդ որում, եթե առաջին ինդեքսը, ձեռնարկատիրական գործունեություն սկսելու և վարելու օրենսդրական փոփոխություններով պայմանավորված, թրենդի փոփոխություններ է գրանցել դիտարկվող ժամանակահատվածում (կայուն աճի միտում է ցուցաբերել մինչ 2012 թ., այնուհետև, 2013 թ. նվազման միտումը միայն 2019 թվականին է վերափոխվել աճի), ապա երկրորդի պարագայում դիտարկվող ամբողջ ժամանակահատվածում թրենդի զգալի փոփոխություն չի գրանցվել: Կարգավորող ինստիտուտների որակի ինդեքսի այս կայունությունը վկայում է այն մասին, որ պետական ապարատի գործունեության, քաղաքականության մշակման ու իրականացման ազդեցությունը մասնավոր հատվածի վրա չի հանգեցրել նախատեսված, նպատակադրված փոփոխություններին, այսինքն՝ մասնավոր հատվածի գործունեության մեջ համապատասխան արտացոլումը չի ունեցել:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ ՀՀ ինստիտուցիոնալ հիմնախնդիրներից կարող ենք առանձնացնել՝

- սեփականության իրավունքի պաշտպանության ցածր մակարդակը, մասնավորապես՝ մտավոր սեփականության պաշտպանության երաշխիքների գրեթե բացակայությունը և օրենսդրական կարգավորման թերի վիճակը,
- դատական համակարգի արդյունավետության ցածր մակարդակը՝ պայմանավորված սուբյեկտիվ հայեցողությամբ, օրենքի միատեսակ կիրառման ցածր երաշխիքով, կոռուպցիայի և բյուրոկրատիայի առկայությամբ,
- օրենքի գերակայության ցածր մակարդակը՝ պայմանավորված տնտեսական, դատական և վարչական ապարատների սերտաճմամբ, ինչպես նաև հանրության իրավագիտակցության ցածր մակարդակով,
- հասարակության ձայնի լսելիության, կառավարության հաշվետվողականության և գործունեության թափանցիկության ցածր մակարդակը, այսինքն՝ մինչ 2018 թ. ժողովրդավարության ինստիտուտի գործողության թերությունները, որի աստիճանական բարելավում է գրանցվում թավշյա հեղափոխությունից հետո:

Ինստիտուցիոնալ միջավայրը բնութագրող ինդեքսների մեծ մասով ՀՀ-ն առաջատարի դիրք է զբաղեցնում ԵԱՏՄ դիտարկվող երկրների շարքում, սակայն, հաշվի առնելով վերոնշյալ հիմնախնդիրները, անհրաժեշտ է դրանց բարելավման ուղղությամբ իրականացնել համապատասխան բարեփոխումներ:

Վերոնշյալ հիմնախնդիրների լուծման նպատակով առաջարկում ենք՝

- սեփականության իրավունքի պաշտպանության կառուցակարգերի, օրենքների և ընթացակարգերի վերաբերյալ հանրային իրազեկման և իրավագիտակցության բարձրացում՝ համապատասխան տեղեկատվական նյութերով, գովազդներով և իրազեկման միջոցառումներով,
- դատական ընթացակարգերի պարզեցում, օրենսդրական կարգավորման բացերի վերացում, օրենսդրության համապատասխանեցում

միջազգային ոլորտային չափանիշներին և հանրային պաշտպանի ինստիտուտի ակտիվ գործարկում՝ ներդրման նախնական շրջանում,

- կոռուպցիայի վերահսկման և օրենքի միատեսակ կիրառման, հայեցողական մոտեցման բացառման համար առաջարկում ենք կատարել համակարգային մշտադիտարկում՝ հատուկ այդ նպատակով ստեղծված մասնագիտական անկախ հանձնաժողովի կողմից:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր:
2. Агапова И.И., Институциональная экономика: учеб. пособие, М., Экономистъ, 2006, 254 с.
3. Аузан А. А., Институциональная экономика, «Инфра-М», 2005, 415 с.
4. Бейлок Р., Что неправильно в Армении. The International Association For Caucasian Regional Studies. Caucasian Regional Studies, Vol. 4, Issue 1, 1999, http://poli.vub.ac.be/publi/crs/rus/0401-05R.htm
5. Ходжсон Дж., Жизнеспособность институциональной экономики /Эволюционная экономика на пороге 21 века/ Доклады и выступления участников международного симпозиума, М., “Япония сегодня”, 1997.
6. Радыгин А.Д., Энтов Р.М., В поисках институциональных характеристик экономического роста (новые подходы на рубеже XX—XXI вв.) // Вопросы экономики, 2008, № 8.
7. Фрейнкман Л. М., Дашкеев В. В., Муфтяхетдинова М. Р., Анализ институциональной динамики в странах с переходной экономикой, М., ИЭПП, 2009, 252 с.
8. Acemoglu D., Robinson J. A., Why Nations Fail: The Origins of Power, Prosperity and Poverty. 1st ed. New York: Crown, 2012.
9. Acemoglu D., Zeneca A., Enso S., Human Capital and the Nature of Technological Progress, Stockholm, December 11, 2003.
10. Acemoglu D., Political Economy of Growth: Modeling Barriers to Economic Growth, Massachusetts Institute of Technology, February 2007.
11. Acemoglu D., Johnson S., Robinson J., Law, Politics and the Wealth of Nations: Lessons From History, Boston Club Meeting.
12. Acemoglu, Risk and Regulation: Lessons From the Crisis of 2008, MIT, 2012.
13. Acemoglu D., James Robinson, The Role of Institutions in Growth and Development, Fall 2010 – Article 1.
14. Alchian A. A., Economic Forces at Work, Indianapolis, Liberty Press, 1977.
15. Akerlof G. A. The Market for “Lemons”: Quality Uncertainty and the Market Mechanism, Quarterly Journal of Economics 84: 1970.
16. Kaufmann D., Kraay A., Mastruzzi M., Governance Matters VIII Aggregate and Individual Governance Indicators, 1996–2008, Policy Research Working Paper 4978, The World Bank,Development Research Group Macroeconomics and Growth Team, June 2009.

17. Dietsche E., Why the Quality of Institutions Is Not a Cure for the "Resource Curse", The Journal of Energy and Development, 32 (2), 2007.
18. Eggertsson T., Economic Behavior and Institutions. Cambridge, Cambridge University Press, 1990.
19. Furubotn E. G., Richter R., Institutions and Economic Theory:The Contribution of the New Institutional Economics, Second Edition, 2005.
20. Hall R.E. , Jones C., Why Do Some Countries Produce So Much More Output Per Worker than Others, Quarterly Journal of Economics, 114 (1), 1999.
21. Harutyunyan G., Sargsyan H., Gevorgyan, R., Assessment of the Level of Constitutionalism in Transition Economies. Journal of Advanced Research in Law and Economics, Volume VIII, Summer, 4(26), DOI:10.14505/jarle.v8,4(26),10, 2017.
22. Havrylyshyn O., Meng X., Tupy M. L., 25 Years of Reforms in ExCommunist Countries: Fast and Extensive Reforms Led to Higher Growth and More Political Freedom, Policy Analysis N 795, July 12, 2016, CATO Institute.
23. North D., Institutions, Institutional Change and Economic Performance, 1990.
24. Voigt S., How (Not) to Measure Institutions. Journal of Institutional Economics, 9 (1), 2013.
25. Woodruff D. M., Understanding Rules and Institutions: Possibilities and Limits of Game Theory, Qualitative Methods Newsletter, 4 (1), 2006.
26. World Development Report 2002: Building Institutions for Markets, The World Bank.
27. https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/
28. http://data.worldbank.org/indicator
29. www.freedomhouse.org
30. www.heritage.org
31. www.fraserinstitute.org
32. www.epub.prsgroup.com
33. www.transparency.org
34. www.info.worldbank.org/governance/WGI/
35. www.weforum.org
36. www.worldvaluessurvey.org

АРМИНЕ АЛОЯН
Аспирант кафедры экономической теории АГЭУ

Институциональная среда Республики Армения и существующие проблемы.– Изучение факторов, определяющих различия в показателях экономического развития между национальными экономиками, в конечном итоге приводит к состоянию институциональной среды в стране, которая является решающей отправной точкой в этом контексте. Об этом свидетельствуют исследования, проведенные в последние десятилетия. Поэтому для того, чтобы наметить видение экономического развития, прежде всего, необходимо оценить состояние институциональной среды страны, выявить существующие проблемы и предпринять меры для их решения. Однако следует отметить, что подходы и методы оценки институциональной среды в стране неоднозначны: часто каждый из них включает в себя только один или несколько элементов институциональной среды, что не позволяет проводить последовательную, объективную оценку. Чтобы избежать вышеизложенного, необходимо рассматривать институциональную среду как совокупность взаимодействий между составляющими ее институтами, и в этом случае, оценивая эффективность каждого учреждения, объединяя полученные показатели, указывая на внутренние взаимодействия системы, мы получим необходимый результат. В данной статье мы попытались проанализировать состояние институциональной среды Республики Армения и ее динамику в 2000-2020 гг. по сравнению со странами ЕАЭС. В статье предпринята попытка оценить институциональную среду Республики Армения с помощью набора показателей, широко используемых в международной практике.

Ключевые слова: *институты, институциональная среда, индекс экономической свободы, индекс верховенства закона, индекс защиты права собственности.*
JEL: B52, P48

ARMINE ALOYAN
PhD Student at the Chair of Economic Theory at ASUE

Institutional Environment of the Republic of Armenia and Existing Problems.– The study of the factors determining the differences in the performance of economic development between national economies ultimately leads to the state of the country's institutional environment, which is a decisive starting

point in this context. This is evidenced by research conducted in recent decades. Therefore, in order to outline the vision of economic development, first of all, it is necessary to assess the state of the country's institutional environment, identify the existing problems, and take steps to solve them. It should be noted, however, that the approaches and methods of assessing a country's institutional environment are ambiguous; often each of them includes only one or several elements of the institutional environment, thus not allowing for a consistent, objective assessment. To avoid the above, it is necessary to consider the institutional environment as a set of interactions between its constituent institutions, in case of which we will get the necessary result by evaluating the effectiveness of each institution, combining the obtained indicators, pointing out the internal interactions of the system. Thus, in this paper we have tried to analyze the state of the institutional environment of the Republic of Armenia and its dynamics in 2000-2020 in comparison with the EEU countries. The research attempts to assess the institutional environment of the Republic of Armenia using a set of indicators widely used in international practice.

Key words: *institutions, institutional environment, index of economic freedom, index of rule of law, index of protection of property rights.*
JEL: B52, P48